

ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հոգևածուժ քննության են առնված գրաբար մատենագրության մեջ հազվադեպ հանդիպող մի շարք բառերի ստուգաբանական և բառիմաստային հարցեր:

Ապաւարտակ

Բառը չկա նոր հայկազյան բառարանում¹: Առձեռն բառարանը (այսուհետև՝ ԱԲ) մեկնում է «անմաքուր»², իսկ Արմատական բառարանը՝ «արգանդ»՝ վկայակոչելով Տրմոթեսոս Կուզի հետևյալ օրինակը. «Քանզի որսէս ի կուսական ապաւարտակացն յառաջ եկեալ մարդ ոչինչ նհատ Աստուած ի ձեռն ճահադործութեանն ճանաչիւր ...»: Նշված իմաստը հաստատվում է և Օրբելյանից բերած վկայութեամբ. «Նախ մարմինն գոյանայ յապաւարտակի ... ապա առնու շունչ և տպաւորի ի նմա կենդանութիւնն»³:

Արմ.-ում բառը ստուգաբանված չէ: Ամենայն հավանականությամբ իրանական լեզուներից կատարված փոխառություն է՝ բառակազմական հետևյալ բաղադրիչներով՝ ապ (իբ. ap «ջուր») և արտ (իբ. Vart, «ծածկ, ծածկել») և ակ (իբ. ak- ածանց): Բառացի «ջուրը ծածկող» կամ «ծածկված ջուր»: Արտաբուստ կարող է թվալ, թե բաղադրիչների այս ներքին կապը հեռու է «արգանդ» իմաստից: Ապաւարտակ-ը ժողովրդական մտածողութեան արգասիք է: Պարսկերենում կա ab.e-pust «տղամարդու սերմ»՝ բառացի՝ «մեջքի ջուր», ահա «սերմ - ջուր» իմաստային անցմամբ էլ ստուգաբանվում է ապաւարտակ բառը. հմմտ. նաև ջրթափել, որը ԱԲ-ն մեկնում է. «սկսիլ սերմ դուրս հանել, մեծնալ տղին»:

Ապլիակ

Գրաբարի բառարանագրության տվյալներով հայ մատենագրության մեջ վկայված է մեկ անգամ՝ Բուզանդի «Պատմության» մեջ. «Ձսոյն և սպարապետին Մանուէլի սոյնպես ետ տանել զթագաւորական պատմուճանն և լանջաց պաաիւ՝ ասիղակ»³:

¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ). հ. 1-2, Վենետիկ, 1836-1837:

² Առձեռն բառարան հայկազեան լեզուի. Վենետիկ, 1865:

³ Հ. ր. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ Արմ.). հ. 1-4, Երևան, 1971-1979:

⁴ Տե՛ս Արմ. ապաւարտակ բառահոգվածը:

⁵ Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց. Ս. Պետերբուրգ, 1883, էջ 207:

ՆՀԲ-ն մեկնում է «զարդ լանջաց», Արմ.-ը՝ «կրծքի վրա կախելու իշխանական զարդ»: Բառի արտաքին-հնչյունական կազմը հուշում է իրանական ընույթը, սակայն Հ. Աճառյանը մերժում է արևելադեռ Թիրեաքյանի նշած պարսկերեն *avēza* «գինդ, օղ» զուգահեռը՝ պատճառաբանելով «որ սակայն չի յարմարիլ մեր բառի հետ Վ ձայնի պատճառաւ»⁶: Առարկությունն ուրեմն հայերեն պ-ի դիմաց պրս. Վ-ի առկայությունն է: Վ դ. վկայված օրինակում, անշուշտ, ապիզակը իրանական ավելի հին ձև է, քան պրս. *avēza*-ն: Իսկ իրանագիտության մեջ կան տվյալներ, երբ իր. ք-ն ներկայանում է Վ (հիմնականում ժամանակային տարբեր կտրվածքներում):

Իր. **xšap* «գիշեր», իրանական այլ լեզուներում ներկայանում է *sap*, *sab*, նաև *sav*⁷: Հավագույն օրինակ է և իրանական *āpāt* «չեն, բնակեցված», Հյ. ասիատ տեղանվանական ձևույթը, որն իրանական լեզուներում առկայանում է նաև *awad* ձևով⁸:

Կարելի է ենթադրել, որ Բուզանդի գործածած ապիզակը միջիրանական լեզուներից հայերենին անցած ձև է:

Գեկակի

Բառը չկա ՆՀԲ-ում և ԱԲ-ում: Այն գործածվել է X դ. Անանիա Մոկացու «Պատճառ յաղագս զԽոսրով նզովելոյն զԱնձեւացւոց եպիսկոպոսն» աշխատության մեջ⁹: Ահա վկայված օրինակը. «...այր համեստ և գիտնաւոր և ալեօք ծերութեամբ զարգացեալ. յանկարծակի իբրև ի գիւական հողւոյն շարժեալ, առանց իրիք հակառակութեան, սկսաւ նախ զբարբառն գելակի արձակել՝ ըստ յունարէն լեզուոյն զկիրակէն կիւռիակէ կոչել և զԵրուսաղէմ՝ Երուսաղէմ և որ սոցին նման է, ի սոյն յառեալ բարբառ»¹⁰: «Զբարբառն գելակի արձակել» համատեքստում նշանակում է «սխալ արտասանել՝ ր-ն ուժեղ արտաբերել»:

Ինչ վերաբերում է բառի ստուգաբանությանը, ապա թերևս գործ ունենք գել «ոլորած, ծուռ» արմատի հետ, որից՝ գելուլ «ոլորել, ճմլել», գելարան և այլն¹¹:

Դոնիւ

Բառաձևը, որ նկատել է Հ. Աճառյանը, վկայված է «Կնիք հաւատոյ»-ում: Ահա օրինակը. «Եւ յառնելն զջուրն գինի և յագեցուցանել զխումբս ժողովրդոցն գոնիւ հացիւքն ...»¹²: Բառիս մասին Աճառյանը գրում է. «Այս

⁶ Տե՛ս Արմ. ապիզակ բառահոգվածը:

⁷ Основы иранского языкознания. Среднеиранские языки. М., 1981, с. 31.

⁸ Նույն տեղում, ավաղ «չեն, փարթամ» գործածական և Ղարաբաղի բարբառում:

⁹ Գ. Տ Ե Ր - Մ Կ Ր տ չ յ ա ն. Հայագիտական ուսումնասիրություններ. գիրք Բ. Ս. Էջմիածին, 1998, էջ 124-127:

¹⁰ Նույն տեղում, էջ 126:

¹¹ Արմ.-ը գել արմատի տակ նշում է և գելակի ձևը «գալարելով, կծկելով, շեղակի» վկայակոչելով Զախջախյանի բառարանը:

¹² Հ. Ա Ճ ա ո Յ ա ն. Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մեջ. Վենետիկ, 1913, էջ 89-90:

անծանօթ բառին ուղիղ մեկնությունը կը վարանիմ տալու. արդեօք դուն բառէն շինուած նորայուր գործիական մ' է, իբր դունիւ «սակաւիկ, իւրիք, քիչ մը»¹³: Նույն թեական բացատրությունն է և Արմատական բառարանում¹⁴:

Մեր կարծիքով հարկ չկա դոնիւ-ը ուղղել դունիւ վերջինիս մեջ տեսնելով «քիչ» իմաստը: Դոնիւ-ը անկասկած դոն բառն է, որը գրաբարում հաճախական չէ. վկայված չէ նաև ո՛չ ՆՀԲ-ում, ո՛չ էլ ԱԲ-ում: Դոն-ը ըստ Աճառյանի վկայված է մեկ անգամ. «Եգ սեղան և ի ներքս Յ սլաքսիմաթ և սկսան օրհնել զԱստուած և զհացն ուտել և կերեալ հայրն Անտօն դմի գոնն»¹⁵: Դոն-ը Աճառյանը մեկնում է «մի տեսակ հաց, պաքսիմատ»:

Դոնիւ հացիւ կապակցության մեջ դոն-ը հացատեսակի անվանում է. այն համարվել է ածական (ինչպիսի՞ հաց) և համաձայնվել հոլովով:

Նկատենք, որ գրաբարում հացատեսակների այլ անվանումներ էլ կան. գրտակ, պան, նկանակ ...¹⁶

Ուրեմն՝ պե՞տք է արձանագրել գոն՝ «հացատեսակ» բառի առկայությունը վաղ գրաբարում:

Երաճիկ լինել

Հանգրիպում ենք միայն մեկ անգամ Եղիշեի գրքում. «Վասն այսորիկ մեծարեալք շրջէին ի գրան արքունի և առատածեռն պարգեւօք երաճիկք լինէին ի նմանէ»¹⁷:

Համատեքստում խոսքը վերաբերում է այն մարդկանց, ովքեր փորձում են համոզել Պարսկաստանի թագավորին, որ չհալածի քրիստոնյաներին և երբ թագավորն ասում է, որ քրիստոնյաներին «զոյգ և հաւասար համարիմ դենիս մազդեզանց, որսլէս և յարգեալ իսկ էին նոքա առ նախնեօքն մերովք, որ ես ինձէն իսկ յիշեմ առ հարբն իմով...»¹⁸, այդ մարդիկ «երաճիկ են լինում» թագավորից:

Եղիշեի գրքի քննական բնագրի ծանոթագրություններում նշվում է, որ որոշ ձեռագրեր ունեն երաճ ձևը: ՆՀԲ-ն երաճ կամ երաճիկ մեկնում է «փառաւոր, բարձր» կամ «ուրախ, խրախ»: ԱԲ-ն՝ «փառաւորուած, ուրախ», Արմ-ը՝ «փառաւորուած, սլատիւ գտած» կամ «ուրախ»: Եղիշեի համապատասխան հատվածը թարգմանված է այսպես. «Մեծարանքներով շրջում էին արքունի պալատում և նրանից առատածեռն սլարդեներ ստանալով ուրախանում էին և ազատ-համարձակ շրջում ամբողջ երկրում»¹⁹: Այսինքն երաճիկ լինել թարգմանված է ըստ բառարանների վկայած իմաստների: Երաճիկ լինել - առաջարկում ենք թարգմանել «ճանապարհ

¹³ Նույն տեղում, էջ 90:

¹⁴ Արմ. դոն բառահոգվածը:

¹⁵ Արմ. դոն բառահոգվածը:

¹⁶ Այդ մասին մանրամասն տե՛ս Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Ուտելիք և ըմպելիք իմաստային խմբի բառերը գրաբարում. - «Բանբեր Երևանի համալսարանի», 1998, N3, էջ 47-48:

¹⁷ Եղիշեի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. Երևան, 1989, էջ 166:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, էջ 167:

ընկնել, հեռանալ», որը և կօգնի բառի ստուգաբանությունը (Արմ.-ում երահ / երահիկ-ը ստուգաբանված է): Բառի կազմում առկա է թերևս իրան. rah «ճանապարհ» արմատը, հմմտ. պրս. rahi sodan, rahi kardan «ճանապարհվել, հեռանալ»:

ԽՈՏԵՄ

Վկայված է V դ.: Ունի «իմաստուն, ուշիմ, խելացի» իմաստները: Հ. Աճառյանը բառը բխեցնում է խորհ «խորհուրդ, մտածություն, միտք» արմատից, որի ծագումը պարզ է²⁰:

Հիշյալ արմատը հանդես է դալիս նաև խոհ ձևով. հմմտ. խորհուրդ, մտախորհ, նաև՝ մտախոհ, բղջախոհ...

Աճառյանը նկատում է, որ լառասկզբում խոհ բաղադրիչով բառերը խոհական, խոհականություն, խոհեմ, խոհուն հետոսկեդարյան վկայություններ են և բացառություն է կազմում միայն խոհեմ-ը որը վկայված է դասական գրաբարում²¹:

Խոհեմ-ի՝ խորհ / խոհ արմատի հետ աղերսը իմաստային տեսակետից համոզիչ է: Սակայն այս գեպքում անբացատրելի է մնում - եմ - ձևությունը. այս հանգամանքն էլ կասկածի տակ է դնում բառի վերը նշված ստուգաբանությունը: Խոհեմ-ը մեր կարծիքով բառակազմական և ստուգաբանական այլ բնույթ ունի: Բառը իրանական ծագում ունի: Հեմ բաղադրիչը իրանական hem (xēm) «բնավորություն, բարք» բառն է, որն առկայանում է նաև միջ. պրս. vat- xēm «վատարար» (vat - «վատ» - xēm «բարք», նաև dusxem «վատ բնավորություն ունեցող», որից հայ. դժխեմ «անզգամ, ժանտ, դժման») ²²:

Ինչ վերաբերում է խոհեմ-ի խո- բաղադրիչին, ապա անշուշտ այն իր. հս «լավ» բառն է, որը ներկայանում է մի շարք կազմություններում, այդ թվում նաև հայերենի իրանական փոխառություններում. հպատակ, հմայել, հնար, հնազանդ...: hūdanak «լավ գիտակ», hūkarp «բարեկազմ», hupuxt «լավ եփած»:

Իրանական լեզուներում էլ նկատվում է հ - x անցումը: Հենց վերոհիշյալ հս «լավ» արմատը առկայանում է նաև x-ով Xōsrov, Xōsrōy: Խոսրով անձանվան մեջ (hu - srav...բառացի լավ խոսող, ճարտարախոս) ²³:

Վերջապես հայ. խոհեմ-ի գուգահեռը կա և միջին պարսկերենում: Մակկենզիի բառարանում կա hu-xēm (hwhyw «լավ բնավորություն ունեցող»), «of good character, good-natured» ²⁴:

Նույնը կա պահլավերեն - հայերեն բառարանում. Hūxem «բարեբարո, քաղցրաբարո, բարեբնույթ, բարեսիրտ, լավատես» ²⁵: Այս բառարանը

²⁰ Արմ. խորհ բառահոգվածը:
²¹ Նույն տեղում:
²² D. N. M a c K e n z i e. A Concise Pahlavi Dictionary. London, 1971.
²³ Основы иранского языкознания..., с. 42.
²⁴ D. N. M a c K e n z i e. նշվ. աշխ. էջ 45:
²⁵ Գ. Մ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն, Պահլավերեն - հայերեն բառարան. Երևան, 1994, էջ 93:

նշում է ինչպես hem «խառնվածք, բնավորություն», այնպես էլ xem ձևերը՝

Մի խոսքով, Հայ. խոհեմ-ի աղերսը իրանական ձևերի հետ, թվում է, անառարկելի է: Հստակ չէ թերևս փոխառյալ բառաձևի սկզբնավիճակը՝ հոխեմ, թե՞ խոհեմ: Երկու ձևերի հնարավորությունը փաստելով, ավելի նախնական ենք համարում հոխեմ, որից տարնմանությունը և խոհեմ «մտածմունք» բառի իմաստի ազդեցությունը էլ կազմվել է խոհեմ ձևը²⁶:

Խոնսունդ

Արմ-ի տվյալներով գործածված է մեկ անգամ՝ «Գիրք թղթոցում»։ «Թեպետ և ծառայք արքայից արքայի եմք, ղհավատ զերուսաղէմի ունիմք և կալցուք: Զի թէ ցայժմ խոնսունդ էին տեսարք, այժմ որչափ ևս առաւել երանելի եմք, որ յարքայից արքայի ծառայութեան հասեալ եմք»²⁷: Աճառյանը նկատի առնելով բառի հնչյունական կաղմը, ենթադրում է, որ «անշուշտ պահլաւերէն բառ է, իմաստը անյայտ»²⁸:

Բառը, իրոք իրանական լեզուներից կատարված փոխառություն է. Հմմտ. միջ. պրս. xonsand «գոհ, բավարարված», xonsandih «գոհություն, բավարարություն»²⁹, որը բազմիցս վկայված է «Սասանյան դատաստանագրքում»³⁰: Ենթադրվում է իր. hu / hva – ni – sanda- կազմությունը³¹: Անկախ ստուգաբանության հավաստիությունից, բառի իրանական բնույթը կասկած չի հարուցում, որը և եզակի վկայությունը գործածվել է Հայ մատենագրության մեջ:

Ինչ վերաբերում է իր. xōnsand / xunsand – Հյ. խոնսունդ զուգահեռների a – ու անհամապատասխանությանը, եթե այն գրչագրական աղավաղում չէ (խոնսունդ, փխ. խոնսանդ), կամ բարբառային ձև, ապա պետք է նկատի առնել, որ իր. a-ն n և v-ից առաջ որոշ դեպքերում փոխվում է u-ի Հմմտ. naxan – naxun «եղունգ», tavan – tuvān «ուժ, կարողություն»³²:

Կազ «կակազ, դժվարախոս»

Գրաբարի բառարաններում այս արմատը որպես անկախաբար գործածվող բառ վկայված չէ: Աճառյանը կակազ «լեզուն ծանր, ծանրախոս, դժուարախոս» բառը համարում է «կրկնուած կազ պարզական արմատից, որ առանձին աւանդուած չէ»³³ Արմ.–ում բառը նաև ստուգաբանված չէ: Պետք է ասել, որ որոշ օրինակներ հաստատում են բառի անկախ գործածությունը վաղ գրաբարում: Ահա մեկ օրինակ, որ կա ՆՀԻ – ում Ոսկերե-

²⁶ Խոհեմ-ի կապը միջիրանական ձևերի հետ նկատել էր արևելագետ Թիրեաքյանը. տե՛ս Արմ. խոհեմ բառահոգրվածք:

²⁷ Արմ. խոնսունդ բառահոգրվածք:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Գ. Մ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 167:

³⁰ А. Г. П е р и х а н я н. Сасанидский Судебник. Ереван, 1973, с. 544.

³¹ Նույն տեղում:

³² Основы иранского языкознания..., с. 25.

³³ Արմ. կակազ բառահոգրվածք:

րանի գործերից. «Որ առ քաղթնատութեան թոթովէին, ստէպ կրթութիւն ղկազ լեզու նոցա էած յուղղութիւն»³⁴:

Կազ-ը թերևս իրանական փոխառութիւն է. հմտ. սկյութերենի ka-zanak, օսերենի k'æzænæg «կակազ»³⁵:

Մատակ «առու»

Արմ.-ի վկայութեամբ նորահայտ բառ է, որը երեք անգամ դործածել է Սա. Օրբելյանը: Ահա մեկ օրինակը. «Եւ չկա այս ջրոյս հաշիւ ոչ Նորեցեաց... ոչ այլ մարդոյ, ոչ յարա կտրել և ոչ ի մարդ և ոչ ի պարտիզի ջուր տալ՝ զատ ի մատակէդ ըմպելոյ մարդոյ և անասնոյ...»³⁶:

Արմ-ում Աճառյանը բերում է մի այլ մատակ արմատ՝ մեկ անգամ վկայված Ուխտանեսի պատմութեան մեջ. «(Շամիրամ) տունն արքունի շինէ հրաշագան իմն շինուածք և զմատակ ամբարտակ ի գետոյն հանեալ»³⁷:

Անշուշտ վերը բերված օրինակների մատակ-ը տարբեր արմատներ է են, իսկ բառաձևը հուշում է հօգուտ իրանական փոխառութեան, որը սակայն «առու» իմաստով մեզ ծանոթ հին կամ միջինիրանական աղբյուրներում չենք հանդիպել:

Իսպահանի խոսվածքի mādē «գետից փորված մեծ ջրանցք» բառն ակնհայտ ձևաիմաստային զուգահեռ է³⁸, որը կարող է հաստատել մատակ «առու, ջրանցք»-ի իրանական բնույթը: Դժվարութիւն է հարուցում արմատի ստուգաբանութիւնը³⁹:

Վարար «հորդ»

Գրաբարյան փուլից բառի վկայութիւնն առայժմ հայտնի չէ, այդ սլաւոնականով էլ այն արձանագրված չէ ոչ ՆՀԲ-ում, և ոչ էլ ԱԲ-ում: Ըստ Արմ.-ի առաջին վկայութիւնը (որպէս բարդ բառի բաղադրիչ) XIII դարից է գետաւարար ձևով⁴⁰: Արմ.-ում բառը ստուգաբանված չէ: Վարար-ը, անշուշտ, աղբրսփում է հ.-ե «ջուր» հասկացութեան հետ, որից վեդ. var «ջուր», սնսկրտ. vār «ջուր», սողդ. war «անձրև», միջ. պրս. vārān «անձրև»: Քանի որ հ.-ե. v (u) հայ. վ-ն քիչ հավանական է, ուստի ենթադրելի է վարարի իրանական բնույթը, մանավանդ, որ հայերենում վ-ով սկսվող բառերի զգալի մասը իրանական փոխառութիւնն է⁴¹: Ինչ վերաբե-

³⁴ ՆՀԲ քաղթնատութիւն բառահոգվածը. կազ-ի անկախ կիրառութեան այլ օրինակ էլ կա եփրեմի դործերում «Երախան որոյ կազ էր լեզուն...» (աե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի սրբագրուած և ճոխացուած Ն. Բիւզանդացու ձեռքով. հ. 2, Ժնեւ, 1990, էջ 667):

³⁵ Основы иранского языкознания. Древнеиранские языки. М., 1979, с. 294.

³⁶ Արմ. մատակ «ջրի աւազան կամ առու» բառահոգվածը:

³⁷ Արմ. մատակ անստույգ բառ բառահոգվածը:

³⁸ Л. П. С м и р н о в а. Исфаханский говор. М., 1978, с. 80.

³⁹ Մատակ «էզ» - մատակ «առու» կապը որոշ վերասլաւոնութեամբ հավանական ենք համարում նկատի առնելով մատակի «կերակրող, սնուցող» նրբիմաստը:

⁴⁰ Արմ. վարար բառահոգվածը:

⁴¹ Բառի իրանական փոխառութիւնն ինչու լրացուցիչ փաստարկ կարելի է համարել և այն հանգամանքը, որ այն գործածական է հայերենի արևելյան բարբառներում ու խոսվածքներում (Ղարաբաղ, Ազուլիս, Գանձակ):

րում է բառակազմությունը, ապա բացառելի չէ վար + ար կազմությունը, հմմտ դալ-ար, արգ-ար, մեծ-ար-ել: Բայց ավելի հավանական ենք համարում վար արմատի կրկնությունը կազմության հնարավորությունը՝ վար (ա) վար – վարար:

Վարար «վավաչոտ»

Այս բաղադրիչն է վարարել «ցոփանալ», վրիրակ «ցոփ», վրիրակություն «ցոփություն» և այլ կազմություններում: Հ. Աճառյանը չստուգաբանելով այն՝ գրում է. «Արդյոք նախորդ բառի (իմա – վարար «հորդ» – Լ. Հ.) մի նոր առումն է»⁴²: Գ. Զահեկյանը հավանական է համարում վարար / վրիրակ «վավաչոտ»-ի իրանական ծագումը⁴³:

Անկասկած վարար «վավաչոտ»-ը վարար «հորդ»-ի իմաստային հենքի վրա առաջացած բառ է⁴⁴: «Ջուր, խոնավություն, թացություն» իմաստից – վավաչ, ցոփ իմաստային անցումների այլ օրինակներ ևս կան: Գէջ բառն ունի «խոնավություն, թացություն», նաև «ցանկասեր, անառակ» իմաստները. Հմմտ. «Ջրնտրութիւնս չորիցն և դգիջոցն» (ՆՀԲ): «ի կանանց, որք պիղծք և գարչք և գէջք են» (ՆՀԲ): Գիջանալ, գիջութիւն բառերն էլ նույնպես երկիմաստ են⁴⁵: Խոնաւուտ-ը բացի «խոնավություն, թացություն»-ից ունի և «մեղկ, ցանկասեր» իմաստները: Բառարաններում վկայված է նաև սիր «խոնավություն, անձրև» – սիր «մեղկ, թույլ, կանացի»⁴⁶. «խոնավություն» – «անառակություն» իմաստային անցումը առկա է և այլ լեզուներում. հմմտ. լատ. *lubricus* «սահուն, լւրծուն» – նաև «անառակ, մեղկ»:

Բահաւետեալ

Բառը գրաբարի հիմնական բառարաններում արձանագրված չէ. այն առկա է միայն «Բառգիրք Հայոց»-ում⁴⁷: Հ. Աճառյանը, բացատրելով երահիլ բառի իմաստը, նշում է. «Արանից է թվում րահաւետեալ «ի բացուստ հիացեալ» որ ունի միայն Բառ. Երեմ»⁴⁸:

Երահիլի՝ վերը մեր առաջարկած բառիմաստով էլ կարելի է և ստուգաբանել րահաւետեալը: Երեմիայի բառարանի «ի բացուստ հիացեալ» բացատրության հիացեալը, անշուշտ, կապված է ավետեալ բաղադրիչի հետ,

⁴² Արմ. վարար «վավաչոտ» բառահոգվածը:

⁴³ Գ. Զահեկյան. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան. Երևան, 1987, էջ 558:

⁴⁴ Իմաստային այս անցումը նկատել է և արևելագետ Տ. Դալայանը. «Հայ. վարար «վավաչոտ» բառն ակնհայտորեն զարգացել է «վարար» իմաստից, քանզի դիցարանական ընկալմամբ ջուրը գեխություն և հեշտանքի խորհրդանիշ է» (տե՛ս Տ. Դալայան. Հայ – օսական մշակութային առնչություններ. Երևան, 2002, էջ 189):

⁴⁵ ՆՀԲ. Համապատասխան բառահոգվածները:

⁴⁶ Հայոց լեզվի բարբառային բառարան. Հ. Բ, Երևան, 2002:

⁴⁷ Բառգիրք Հայոց. Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հ. Մ. Ամայրանի, Երևան, 1975:

⁴⁸ Արմ. երահ կամ երահիլ բառահոգվածը:

իսկ ի բացուստը՝ ըստ – ի մեր առաջարկած իմաստի հետ «հեռանալով, հեռվից»:

ЛЕКСИКОЛОГИЧЕСКИЕ ЗАМЕТКИ

ЛАВРЕНТИЙ ОГАНЕСЯН

Р е з ю м е

Обсуждаемые в статье слова по сей день не имеют достоверных этимологий. Внешняя форма (звуковой состав) ряда слов свидетельствует об их иранском происхождении – независимо от факта их засвидетельствованности в иранских языках. Ապաւարտակ "утроба, матка", предположительно, состоит из ир. ар "вода" + vart "покрытие" + суффикс ак, дословно "покрытая вода", где ар употреблено в значении "мужское семя", ср. перс. ab – e – pušt "мужское семя", дословно "вода спины". Ապիզակ (украшение) имеет перс. параллель aveza "серьга, кольцо". Ապիզակ наверно представляет среднеиранскую форму. Խոհեմ – "способный, умный" безусловно, является сочетанием компонентов hu(xu) "хороший" и hēm(xēm) "характер, нрав", ср. иран. vat – хем "безнравственный" – vat "плохой" – хем "характер". Խոնսանդ "довольный, удовлетворенный" и ср. иран. хонсанд "довольный, удовлетворенный", хонсандиһ "довольство, удовлетворенность", являются, безусловно, параллелями. Слова Կազ "заика, косноязычный", ճատակ "ручей", վարար "обильный, многоводный", а также "сладострастный, похотливый", также являются армяно-иранскими параллелями, ср. скиф. Kazanak "заика", слово испаханского говора madl "вырытый от русла реки большой канал", ср. перс. vaḡan "дождь". Երահիկ լինել, словари отмечают "быть довольным", принимая иранское происхождение, предлагаем новое значение сочетания երահիկ լինել: "отправляться в путь, удаляться, основываясь на иранском слове ḡah "дорога". Գեղակի "неправильный", դոն (իւ) "хлеб" слова и.-е. происхождения, ср. арм. գելուլ "закручивать, сжимать", դոն "хлеб, вид хлеба".

LEXICOLOGICAL NOTES

LAVRENTY HOVHANNISYAN

S u m m a r y

The words discussed in this article have not had an exact etymology so far. The external form that is the sound form of a number of words confirms their Iranian nature though they are loan words. Ապաւարտակ "womb" supposedly consists of Iranian ар "water" + vart "to cover" + ak suffix, word for word translation of which is "covered water", where the ар "water" is used in the sense of "male sperm", correspondingly Persian ab – e – pušt "male sperm", word for word trans-

lation of which is “back water”. Ապիզակ (trimming). The Persian equivalent of Ապիզակ aveza “ring, ear-ring” also bears the Iranian nature of this word, which, in fact, represents a medial Iranian non-borrowed form. հոհեմ – “clever, smart” is, of course, a construction with medial Iranian components hu(xu) “good” and hēm(xēm) “character, morals” correspondingly Iranian vat-xēm “dastard” - vat “bad”, - xēm “character”. հոհունդ “pleased, satisfied” – medial Iranian xonsand “pleased, satisfied”, xōnsandih “pleasure, satisfaction”, are obvious equivalents. The words Կազ “stammerer”, ժառակ “brook”, վարար “heavy rain” (also “lustful”) are also Armenian – Iranian coincidences – correspondingly Scythian *Kazanak* “stammerer”, *mād* (Ispahan dialect) “a big canal dug out of a river”, medial Persian *varan* “rain”. Երահիկ լիհեկ, - dictionary definition of this word is “to be pleased”, accepting its Iranian origin. Not denying the origin of this word, we suggest a new meaning for the word-combination *երահիկ լիհեկ*, that is “to set off, to leave”, on the basis of the Iranian word *rah* “road”. Գեղակի “wrong” is derived from *vēlu “to twist, to squeeze” and դոն (հլ) is the name of bread, derived from *dhon.